Վարչական գործ թիվ ՎԴ2/0015/05/15

Վ Ճ Ի Ռ
ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

02.07.2015թ. ք. Սևան

Հայաստանի Հանրապետության վարչական դատարանը՝

նախագահությամբ՝ դատավոր Ա. Մկրտչյանի
քարտուղարությամբ՝ Ա. Խաչատրյանի

Մասնակցությամբ՝
հայցվորի ներկայացուցիչ՝ Գևորգ Ղուկասի Հայրապետյանի
(անձնագիր՝ AN 0501047, տրվել է
05.06.2013թ. 013-ի կողմից, լիազորագիրը
տրվել է 20.01.2015թ.)

պատասխանողի ներկայացուցիչ՝ Գիգուշ Սուրենի Գիշյանի
(անձնագիր՝ AN 0789666, տրվել է
09.01.2014թ. 047- ի կողմից, լիազորագիրը
տրվել է 11.06.2015թ.)

դռնբաց դատական նիստում քննության առնելով <<Ինֆորմացիայի ազատության կենտրոն>> հասարակական կազմակերպության (այսուհետ՝ նաև Կազմակերպություն) հայցն ընդդեմ Նոյեմբերյանի քաղաքապետարանի (այսուհետ՝ նաև Քաղաքապետարան)՝ Նոյեմբերյանի քաղաքապետարանի այն գործողությունները կամ անգործությունը, որով <<Տեղեկատվության ազատության մասին>> ՀՀ օրենքով սահմանված ժամկետում պատասխան չի տրվել <<Ինֆորմացիայի ազատության կենտրոն>> հասարակական կազմակերպության հարցմամբ խնդրվող տեղեկատվության վերաբերյալ ոչ իրավաչափ ճանաչելու պահանջի մասին,

Պ Ա Ր Զ Ե Ց

1. **Գործի դատավարական նախապատմությունը.**

16.02.2015թ. <<Ինֆորմացիայի ազատության կենտրոն>> հասարակական կազմակերպությունը հայցադիմում է ներկայացրել ՀՀ վարչական դատարան (այսուհետ՝ նաև Դատարան) ընդդեմ Նոյեմբերյանի քաղաքապետարանի՝ Նոյեմբերյանի քաղաքապետարանի այն գործողությունները կամ անգործությունը,

որով <<Տեղեկատվության ազատության մասին>> ՀՀ օրենքով սահմանված ժամկետում պատասխան չի տրվել <<Ինֆորմացիայի ազատության կենտրոն>> հասարակական կազմակերպության կողմից հարցմամբ խնդրվող տեղեկատվության վերաբերյալ ոչ իրավաչափ ճանաչելու և Քաղաքապետարանի ոչ իրավաչափ գործողությունների կամ անգործության հետևանքով առաջացած հետևանքը վերացնելու, այն է՝ Նոյեմբերյանի քաղաքապետարանին հնգօրյա ժամկետում Ինֆորմացիայի ազատության կենտրոնի՝ 05.11.2014թ. թիվ 230-3 գրավոր հարցմամբ փնտրվող տեղեկատվությունը տրամադրելուն պարտավորեցնելու և Նոյեմբերյանի քաղաքապետարանի ոչ իրավաչափ գործողությունների կամ անգործության հետևանքով Ինֆորմացիայի ազատության կենտրոնի կրած վնասները փոխհատուցելուն պարտավորեցնելու պահանջների մասին:

Դատարանի 27.02.2015թ. որոշմամբ <<Ինֆորմացիայի ազատության կենտրոն>> հասարակական կազմակերպության հայցադիմումն ընդդեմ Նոյեմբերյանի քաղաքապետարանի՝ <<ոչ իրավաչափ ճանաչել Նոյեմբերյանի քաղաքապետարանի այն գործողությունները կամ անգործությունը, որով <<Տեղեկատվության ազատության մասին>> ՀՀ օրենքով սահմանված ժամկետում պատասխան չի տրվել ԻԱԿ-ի կողմից հարցմամբ խնդրվող տեղեկատվության վերաբերյալ>> և <<վերացնել այն հետևանքը, որը առաջացել է Քաղաքապետարանի ոչ իրավաչափ գործողությունների կամ անգործության հետևանքով, այն է՝ պարտավորեցնել Նոյեմբերյանի քաղաքապետարանին հնգօրյա ժամկետում տրամադրել Ինֆորմացիայի ազատության կենտրոնի՝ 2014 թվականի նոյեմբերի 5-ի թիվ 230-3 գրավոր հարցմամբ փնտրվող տեղեկատվությունը>> պահանջների մասով վերադարձվել է, իսկ <<վերացնել այն հետևանքը, որը առաջացել է Քաղաքապետարանի ոչ իրավաչափ գործողությունների կամ անգործության հետևանքով, այն է՝ պարտավորեցնել Նոյեմբերյանի քաղաքապետարանին փոխհատուցել Քաղաքապետարանի ոչ իրավաչափ գործողությունների կամ անգործության հետևանքով Ինֆորմացիայի ազատության կենտրոնի կրած վնասները>> պահանջի մասով հայցադիմումի ընդունումը մերժվել է:

Հայցադիմումը Դատարանում կրկին ստացվել է 12.03.2015թ., իսկ Դատարանի Սևանի նստավայրում 18.03.2015թ.:

Դատարանի 23.03.2015թ. որոշմամբ հայցադիմումն ընդունվել է վարույթ: Նույն օրվա որոշմամբ պետական տուրքի վճարման ժամկետը հետաձգելու մասին միջնորդությունը բավարարվել է՝ հայցադիմում ներկայացնելու համար օրենքով սահմանված պետական տուրքի վճարման ժամկետը հետաձգվել է, իսկ պետական տուրքի վճարումից ազատելու մասին <<Ինֆորմացիայի ազատության կենտրոն>> հասարակական կազմակերպության միջնորդությունը մերժվել է:

Նոյեմբերյանի քաղաքապետարանը 07.04.2015թ. հայցադիմումի պատասխան է ներկայացրել:

11.05.2015թ. հրավիրվել է նախնական դատական նիստ, որտեղ պարզաբանվել են ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 89-րդ հոդվածի 3-րդ մասով նախատեսված հարցերը:

Դատարանի 11.05.2015թ. որոշմամբ գործը նշանակվել է դատաքննության:

Դատավարության մասնակիցները պատշաճ կարգով ծանուցվել են դատական նիստի վայրի և ժամանակի մասին: Դատական նիստին ներկայացել են հայցվորի ներկայացուցիչ Գևորգ Հայրապետյանը և պատասխանողի ներկայացուցիչ Գիգուշ Գիշյանը:

Դատաքննությունը հայտարարվել է ավարտված 15.06.2015թ. և դատական ակտի հրապարակման օր է նշանակվել 02.07.2015թ.:

2. **Հայցվորի իրավական դիրքորոշումը.**

Դիմելով դատարան Կազմակերպությունը հայտնել է, որ 05.11.2014թ. տեղեկություն ստանալու համար թիվ 230-3 գրավոր հարցմամբ դիմել է Նոյեմբերյանի քաղաքապետարանին խնդրելով տեղեկություններ Նոյեմբերյանի քաղաքապետի գործուղումների և Նոյեմբերյան քաղաքում ասֆալտապատման աշխատանքների վերաբերյալ: Հարցմամբ Քաղաքապետարանից խնդրվել է տրամադրել Նոյեմբերյան համայնքի ղեկավարի 2014թ. 1-ին կիսամյակի գործուղումների ցանկը և յուրաքանչյուր գործուղման համար համայնքային բյուջեից ծախսված գումարի չափը, 2014թ. 1-ին կիսամյակում Նոյեմբերյան քաղաքում ասֆալտապատման աշխանքների համար համայնքային բյուջեից ծախսված գումարի հաշվետվությունը, Նոյեմբերյան քաղաքում ասֆալտապատման աշխանքների իրականացման համար հայտարարված մրցույթի մասնակիցների տվյալներն ու մրցույթի քաղվածքը:

Հարցումը Քաղաքապետարանին ուղարկվել է պատվիրված նամակով՝ 05.11.2014թ., սակայն Կազմակերպությունը Քաղաքապետարանից հարցման պատասխանը չի ստացել:

ՀՀ Սահմանադրության 27-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի խոսքի ազատության իրավունք, ներառյալ տեղեկություններ և գաղափարներ փնտրելու, ստանալու, տարածելու ազատությունը, տեղեկատվության ցանկացած միջոցով՝ անկախ պետական սահմաններից:

ՀՀ Սահմանադրության 27.1-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի իր անձնական կամ հասարակական շահերի պաշտպանության նկատառումներով իրավասու պետական և տեղական ինքնակառավարման մարմիններին և պաշտոնատար անձանց դիմումներ կամ առաջարկություններ ներկայացնելու և ողջամիտ ժամկետում պատշաճ պատասխան ստանալու իրավունք:

Կոնվենցիայի 10-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի ազատորեն արտահայտվելու իրավունք: Այս իրավունքը ներառում է սեփական կարծիք ունենալու, տեղեկություններ և գաղափարներ ստանալու և տարածելու ազատությունը առանց պետական մարմինների միջամտության և անկախ սահմաններից:

<<Տեղեկատվության ազատության մասին>> ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ յուրաքանչյուր անձ իրավունք ունի ծանոթանալու իր փնտրած տեղեկությանը և (կամ) դա ստանալու նպատակով օրենքով սահմանված կարգով հարցմամբ դիմելու տեղեկատվություն տնօրինողին և ստանալու այդ տեղեկությունը:

Օրենքի 3-րդ հոդվածի 4-րդ պարբերության համաձայն՝ տեղական ինքնակառավարման մարմինները տեղեկություն տնօրինող են:

Իսկ Օրենքի 9-րդ հոդվածի 7-րդ մասի համաձայն՝ գրավոր հարցման պատասխանը տրվում է հետևյալ ժամկետներում.

1) եթե գրավոր հարցման մեջ նշված տեղեկությունը հրապարակված չէ, ապա դրա պատճենը դիմողին է տրվում հարցումն ստանալուց հետո՝ 5-օրյա ժամկետում,
2) եթե գրավոր հարցման մեջ նշված տեղեկությունը հրապարակված է, ապա տվյալ հրապարակման միջոցի, վայրի և ժամկետի մասին տեղեկությունը դիմողին է տրվում հարցումն ստանալուց հետո՝ 5-օրյա ժամկետում,
3) եթե գրավոր հարցման մեջ նշված տեղեկությունը տրամադրելու համար անհրաժեշտ է կատարել լրացուցիչ աշխատանք, ապա այդ տեղեկությունը դիմողին է տրվում դիմումն ստանալուց հետո՝ 30-օրյա ժամկետում, որի մասին հարցումն ստանալուց հետո՝ 5-օրյա ժամկետում գրավոր տեղեկացվում է դիմողին՝ նշելով հետաձգման պատճառները և տեղեկությունը տրամադրելու վերջնական ժամկետը:

Օրենքի 9-րդ հոդվածի 10-րդ մասի համաձայն՝ եթե տեղեկատվություն տնօրինողը չունի փնտրվող տեղեկությունը, կամ դրա տրամադրումն իր լիազորությունների շրջանակից դուրս է, ապա նա տվյալ գրավոր հարցումն ստանալուց հետո 5-օրյա ժամկետում, պարտավոր է այդ մասին գրավոր տեղեկացնել դիմողին, իսկ հնարավորության դեպքում նրան տրամադրել նաև այդ տեղեկատվությունը տնօրինողի (այդ թվում արխիվի) գտնվելու վայրը, որն ունի փնտրվող տեղեկությունը:

Օրենքի 8-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ տեղեկատվություն տնօրինողը, բացառությամբ սույն հոդվածի 3-րդ մասում սահմանված դեպքերի, մերժում է տեղեկության տրամադրումը, եթե դա

1) պարունակում է պետական, ծառայողական, բանկային, առևտրային գաղտնիք,
2) խախտում է մարդու անձնական և ընտանեկան կյանքի գաղտնիությունը, այդ թվում նամակագրության, հեռախոսային խոսակցությունների, փոստային, հեռագրական և այլ հաղորդումների գաղտնիությունը,
3) պարունակում է հրապարակման ոչ ենթակա նախնական քննության տվյալները,
4) բացահայտում է մասնագիտական գործունեությամբ պայմանավորված մատչելիության սահմանափակում պահանջող տվյալներ (բժշկական, նոտարական, փաստաբանական գաղտնիք),
5) խախտում է հեղինակային իրավունքը և (կամ) հարակից իրավունքները:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ եթե պահանջվող տեղեկության մի մասը պարունակում է տվյալներ, որոնց տրամադրումը ենթակա է մերժման, ապա տեղեկություն է տրամադրվում մնացած մասի վերաբերյալ:

Օրենքի 11-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ գրավոր հարցմամբ պահանջվող տեղեկության տրամադրումը մերժելու դեպքում տեղեկատվություն տնօրինողն այդ մասին 5-օրյա ժամկետում գրավոր հայտնում է դիմողին նշելով մերժման հիմքը (օրենքի համապատասխան նորմը), ինչպես նաև դրա բողոքարկման կարգը:

Օրենքի 12-րդ հոդվածի 3-րդ կետի համաձայն՝ տեղեկատվության ազատության ապահովման ոլորտում տեղեկատվություն տնօրինողը պարտավոր է օրենքով սահմանված կարգով տեղեկություններ փնտրող անձին տրամադրել հավաստի և իր տնօրինության տակ գտնվող ամբողջական տեղեկություն:

ՀՀ վարչական դատավության օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն՝ յուրաքանչյուր ֆիզիկական կամ իրավաբանական անձ սույն օրենսգրքով սահմանված կարգով իրավունք ունի դիմելու վարչական դատարան, եթե համարում է, որ պետական կամ տեղական ինքնակառավարման մարմինների կամ դրանց պաշտոնատար անձանց վարչական ակտերով, գործողություններով կամ անգործությամբ խախտվել են կամ անմիջականորեն կարող են խախտվել նրա Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ, միջազգային պայմանագրերով, օրենքներով և այլ իրավական ակտերով ամրագրված իրավունքները և ազատությունները...:

ՀՀ վարչական դատավության օրենսգրքի 71-րդ հոդվածի համաձայն՝ վիճարկման, պարտավորեցման, գործողության կատարման կամ ճանաչման հայցի հետ կարող է ներկայացվել պահանջ այն հետևանքները վերացնելու մասին, որոնք առաջացել են վիճարկվող վարչական ակտի կամ վիճարկվող գործողության (անգործության) կամ վարչական ակտ ընդունելը մերժելու կամ վարչական ակտ չընդունելու հետևանքով:

ՀՀ Սահմանադրությամբ և Կոնվենցիայով երաշխավորված <<Տեղեկատվության ազատության մասին>> ՀՀ օրենքում ամրագրված՝ տեղեկատվության ազատության և ողջամիտ ժամկետում պատշաճ պատասխան ստանալու Կազմակերպության իրավունքներն ապահովելու համար Քաղաքապետարանը պարտավոր էր Օրենքի 11-րդ հոդվածի 3-րդ կետով սահմանված կարգով կատարել Օրենքի 9-րդ հոդվածի՝ 7-րդ կետով կամ նույն հոդվածի 10-րդ կետով սահմանված գործողություններից որևէ մեկը կամ Օրենքի 8-րդ հոդվածի 1-ին կամ 2-րդ մասերով սահմանված գործողություններից որևէ մեկը:

Քաղաքապետարանը պարտավոր էր Օրենքով սահմանված ժամկետում կամ տրամադրել հարցմամբ խնդրվող տեղեկությունները և փաստաթղթերի պատճենները, կամ, հայցվող տեղեկությունները հրապարակված լինելու դեպքում տրամադրել տվյալ հրապարակման միջոցի, վայրի և ժամկետի մասին տեղեկությունը (հղում կատարել տեղեկատվության աղբյուրին):

Քաղաքապետարանը պարտավոր էր նաև Օրենքով սահմանված ժամկետում Օրենքի 8-րդ հոդվածի 1-ին մասում նախատեսված հիմքերի առկայության դեպքում մերժել խնդրվող տեղեկությունները, կամ, եթե պահանջվող տեղեկության միայն մի մասն է պարունակում տվյալներ, որոնց տրամադրումը ենթակա է մերժման, ապա տեղեկություն տրամադրեր մնացած մասի վերաբերյալ: Ընդ որում, տեղեկատվության տրամադրումն ամբողջությամբ կամ մասնակիորեն մերժելու դեպքում Օրենքի 11-րդ հոդվածի 3-րդ կետի պահանջով Քաղաքապետարանը պետք է ներկայացներ գրավոր մերժում՝ նշելով մերժման հիմքը, ինչպես նաև դրա բողոքարկման կարգը:

Քաղաքապետարանը չի կատարել Օրենքի 9-րդ հոդվածի 7-րդ մասով կամ նույն հոդվածի 10-րդ մասով կամ նույն օրենքի 8-րդ հոդվածի 1-ին կամ 2-րդ մասերով սահմանված գործողություններից որևէ մեկը՝ այն է, Կազմակերպության գրավոր հարցմանն ի պատասխան Օրենքով սահմանված ժամկետում չի տրամադրել գրավոր պատասխան կամ գրավոր մերժում՝ դրսևորած անգործությամբ (գործողությամբ) խախտել է Օրենքի վերոնշյալ հոդվածների պահանջները, ուստի Քաղաքապետարանի անգործությունը ոչ իրավաչափ է:

Քաղաքապետարանը Կազմակերպության կողմից տեղեկատվություն ստանալու հարցում ստանալուց հետո Օրենքով սահմանված ժամկետում որևէ պատասխան չի տրամադրել՝ դրսևորած անգործությամբ (գործողությամբ) խախտել է Կազմակերպության ՀՀ Սահմանադրությամբ և Կոնվենցիայով երաշխավորված, Օրենքով սահմանված տեղեկատվության ազատության և ողջամիտ ժամկետում պատշաճ պատասխան ստանալու իրավունքները:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 69-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ ճանաչման հայցով հայցվորը կարող է պահանջել ոչ իրավաչափ ճանաչել ... գործողությունը կամ անգործությունը, եթե հայցվորն արդարացիորեն շահագրգռված է ակտը կամ գործողությունը կամ անգործությունը ոչ իրավաչափ ճանաչելու մեջ, այսինքն՝ առկա է նմանատիպ իրավիճակում նմանատիպ միջամտող վարչական ակտ կրկին ընդունելու կամ գործողություն կրկին կատարելու վտանգ, հայցվորը մտադիր է պահանջել գույքային վնասի հատուցում...:

<<Ինֆորմացիայի ազատության կենտրոն>> հասարակական կազմակերպությունը ոչ կառավարական կազմակերպություն է, որի կանոնադրական գործառույթները, նպատակներն ու խնդիրներն են՝ ի թիվս այլոց Հայաստանի Հանրապետությունում տեղեկատվության ազատության զարգացմանը նպաստելը, մարդկանց տեղեկություն ստանալու իրավունքի պաշտպանությանը, տեղեկատվության ազատության ոլորտում իրավագիտակցության բարձրացմանը, կրթվելուն նպաստելը, մարդկանց իրավաբանական և մասնագիտական խորհրդատվություն ստանալուն աջակցելը: Իր կանոնադրական նպատակները իրականացնելու համար Կազմակերպությունը տարեկան տեղեկություն ստանալու տասնյակ հարցումներ է ուղարկում տեղեկություն տնօրինող մարմինների, այդ թվում՝ տեղական ինքնակառավարման մարմիններին՝ միևնույն մարմնին մի քանի անգամ, ուստի Կազմակերպության համար առկա է նմանատիպ իրավիճակում նմանատիպ գործողություն կրկին

կատարելու (տեղեկություն ստանալու հարցումն անպատասխան թողնելու և տեղեկություն ստանալու իրավունքը խախտելու) վտանգ։

Բացի այդ, ՀՀ վարչական դատավարության կարգով դատական պաշտպանության իրավունքի իրացման նպատակն ուղղված է վարչական մարմնի ոչ իրավաչափ գործողության (անգործության) ճանաչմանը և տեղեկատվություն ստանալու իրավունքի ենթադրյալ խախտման վերականգնմանը։ Իր իրավունքի դատական պաշտպանությունն իրականացնելու նպատակով Կազմակերպությունը կատարել է ծախսեր, որոնք չէր կատարի, եթե իր իրավունքը խախտված չլիներ։ Ուստի, եթե պարզվի, որ վարչական մարմնի գործողությունը (անգործությունը) իրավաչափ չի եղել, ապա Կազմակերպությունը մտադիր է պահանջել վնասի հատուցում։ Հետևաբար հայցադիմումով ներկայացված պահանջը բխում է ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 69-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետից։

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 72-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի <<բ>> ենթակետի համաձայն՝ հայցը վարչական դատարան կարող է ներկայացվել՝ 5 տարվա ընթացքում՝ սույն օրենսգրքի 69-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանված գործերով։

Կազմակերպության կողմից փնտրվող տեղեկատվությունը Քաղաքապետարանի կողմից չտրամադրելը վերադասության կարգով չի բողոքարկվել, քանի որ <<Տեղեկատվության ազատության մասին>> ՀՀ օրենքը նման պարտադիր պայման չի նախատեսում։

Վերոգրյալի հիման վրա խնդրել է ոչ իրավաչափ ճանաչել Նոյեմբերյանի քաղաքապետարանի այն գործողությունները կամ անգործությունը, որով <<Տեղեկատվության ազատության մասին>> ՀՀ օրենքով սահմանված ժամկետում պատասխան չի տրվել Կազմակերպության կողմից հարցմամբ խնդրվող տեղեկատվության վերաբերյալ։

Դատական նիստի ընթացքում Կազմակերպության ներկայացուցիչ Գևորգ Հայրապետյանը հայցը պնդել է և խնդրել է այն բավարարել։

3. **Պատասխանողի իրավական դիրքորոշումը.**

Քաղաքապետարանը 07.04.2015թ. հայցադիմումի պատասխան է ներկայացրել, որով հայտնել է, որ <<Ինֆորմացիայի ազատության կենտրոն>> հասարակական կազմակերպության 05.11.2014թ. թիվ 230-3 գրավոր հարցմանը 5-օրյա ժամկետում պատասխան չներկայացնելը իրենց կողմից բացթողում կատարելու արդյունք է և դրա մեջ որևէ միտումնավոր արարք չկա։

Գործունեության հրապարակայնության և թափանցիկության սկզբունքից ելնելով իրենք պարտավոր են տեղեկատվություն տրամադրել պետական և հասարակական կազմակերպություններին իրենց տնօրինման ներքո գտնվող տեղեկությունների սահմաններում։

Եթե հայցվոր կողմի պահանջած տեղեկությունը մեծ անհրաժեշտություն է ունեցել, ապա վերջինս կարող էր գրությամբ կամ հեռախոսային կապի միջոցով իրենց տեղեկացնել պատասխան ուղարկելու վերաբերյալ: Հայցադիմումի մեկ օրինակը ստանալու հաջորդ օրը <<Ինֆորմացիայի ազատության կենտրոն>> հասարակական կազմակերպության թիվ 230-3 հարցման հիման վրա իրենց կողմից ներկայացվել է տեղեկություն Նոյեմբերյանի քաղաքապետի 2014 թվականի առաջին կիսամյակի գործուղումների ցանկի և յուրաքանչյուր գործուղման համար բյուջեից ծախսված գումարի չափի վերաբերյալ, ինչպես նաև տեղեկացվել է, որ համայնքի բյուջեի հաշվին 2014 թվականի առաջին կիսամյակում ասֆալտապատման աշխատանքներ չեն իրականացվել:

Վերոգրյալի հիման վրա խնդրել է Նոյեմբերյանի քաղաքապետարանի գործողությունները ոչ իրավաչափ ճանաչելու վերաբերյալ հայցվորի պահանջը մերժել:

Դատական նիստի ընթացքում Քաղաքապետարանի ներկայացուցիչ Գիգուշ Գիշյանը առարկել է հայցի դեմ և խնդրել է հայցը մերժել:

4. Գործի լուծման համար էական նշանակություն ունեցող փաստերը.

1. <<Ինֆորմացիայի ազատության կենտրոն>> հասարակական կազմակերպությունը 05.11.2014թ. թիվ 230-ի 3 գրությամբ Նոյեմբերյանի քաղաքապետարանից պահանջել է տրամադրել Նոյեմբերյան համայնքի ղեկավարի 2014թ. 1-ին կիսամյակի գործուղումների ցանկը և յուրաքանչյուր գործուղման համար համայնքային բյուջեից ծախսված գումարի չափը, 2014թ. 1-ին կիսամյակում Նոյեմբերյան քաղաքում ասֆալտապատման աշխանքների համար համայնքային բյուջեից ծախսված գումարի հաշվետվությունը, Նոյեմբերյան քաղաքում ասֆալտապատման աշխանքների իրականացման համար հայտարարված մրցույթի մասնակիցների տվյալներն ու մրցույթի քաղվածքը:
2. Համաձայն <<Հայփոստ>> փակ բաժնետիրական ընկերության 10.06.2015թ. թիվ Ել.2/3-2052 գրության՝ Նոյեմբերյանի քաղաքապետարանին հասցեագրված թիվ AR 164208690 AM պատվիրված նամակը Նոյեմբերյանի թիվ 01 փոստային բաժանմունքում ստացվել է 07.11.2014թ. և 10.11.2014թ. հանձնվել է քաղաքապետարանի աշխատակցուհուն՝ Արմինե Ամիրաղյանին:
3. Ի կատարումն Դատարանի 11.05.2015թ. <<Ապացույց պահանջելու մասին>> որոշման Քաղաքապետարանը 19.05.2015թ. թիվ Ե-01/121 գրությամբ հայտնել է, որ <<Ինֆորմացիայի ազատության կենտրոն>> հասարակական կազմակերպության 05.11.2014թ. թիվ 230-3 տեղեկատվություն ստանալու հարցումը Քաղաքապետարանի կողմից ստացվել է 07.11.2014թ.:

5. Դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումները.

Լսելով կողմերի ներկայացուցիչների բացատրությունները, գնահատելով գործում եղած բոլոր ապացույցները՝ բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտման վրա

հիմնված՝ ներքին համոզմամբ Դատարանը գտնում է, որ հայցը ենթակա է բավարարման՝ հետևյալ պատճառաբանությամբ.

ՀՀ Սահմանադրության 1-ին հոդվածը սահմանում է, որ Հայաստանի Հանրապետությունը ինքնիշխան, ժողովրդավարական, սոցիալական, իրավական պետություն է:

ՀՀ Սահմանադրության 3-րդ հոդվածի համաձայն՝ մարդը, նրա արժանապատվությունը, հիմնական իրավունքները և ազատությունները բարձրագույն արժեքներ են:

Պետությունն ապահովում է մարդու և քաղաքացու հիմնական իրավունքների և ազատությունների պաշտպանությունը՝ միջազգային իրավունքի սկզբունքներին ու նորմերին համապատասխան:

Պետությունը սահմանափակված է մարդու և քաղաքացու հիմնական իրավունքներով և ազատություններով՝ որպես անմիջականորեն գործող իրավունք:
ՀՀ Սահմանադրության 18-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի իր իրավունքների և ազատությունների դատական, ինչպես նաև պետական այլ մարմինների առջև իրավական պաշտպանության արդյունավետ միջոցների իրավունք:

Յուրաքանչյուր ոք ունի իր իրավունքները և ազատություններն օրենքով չարգելված բոլոր միջոցներով պաշտպանելու իրավունք:

ՀՀ Սահմանադրության 27-րդ հոդվածի 2-րդ պարբերության համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի խոսքի ազատության իրավունք, ներառյալ՝ տեղեկություններ և գաղափարներ փնտրելու, ստանալու, տարածելու ազատությունը, տեղեկատվության ցանկացած միջոցով՝ անկախ պետական սահմաններից:

ՀՀ Սահմանադրության 27.1-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի իր անձնական կամ հասարակական շահերի պաշտպանության նկատառումներով իրավասու պետական և տեղական ինքնակառավարման մարմիններին և պաշտոնատար անձանց դիմումներ կամ առաջարկություններ ներկայացնելու և ողջամիտ ժամկետում պատշաճ պատասխան ստանալու իրավունք:

ՀՀ Սահմանադրության վերոնշյալ դրույթներով Հայաստանի Հանրապետությունը երաշխավորում է մարդու և քաղաքացու հիմնական իրավունքների և ազատությունների պաշտպանությունը՝ միջազգային իրավունքի սկզբունքներին ու նորմերին համապատասխան, այդ թվում՝ խոսքի ազատության իրավունքի և այդ իրավունքի բովանդակային մասը կազմող տեղեկություններ և գաղափարներ փնտրելու, ստանալու, տարածելու ազատության, ինչպես նաև իրավասու պետական և տեղական ինքնակառավարման մարմիններին և պաշտոնատար անձանց դիմումներ կամ առաջարկություններ ներկայացնելու և ողջամիտ ժամկետում պատշաճ պատասխան ստանալու իրավունքի պաշտպանությունը, ինչն ուղղակիորեն բխում է իրավական պետության սկզբունքից:

Տեղեկատվության ապահովման բնագավառում տեղեկատվություն տնօրինողների իրավասությունը, ինչպես նաև տեղեկություններ ստանալու կարգը, ձևերը և պայմանները սահմանվում և տեղեկատվության ազատության հետ կապված հարաբերությունները կարգավորվում են <<Տեղեկատվության ազատության մասին>> ՀՀ օրենքով, որի գործողությունը տարածվում է պետական և տեղական ինքնակառավարման մարմինների, պետական հիմնարկների, բյուջեներից ֆինանսավորվող կազմակերպությունների, ինչպես նաև հանրային նշանակության կազմակերպությունների և դրանց պաշտոնատար անձանց վրա (1-ին հոդվածի 2-րդ մաս):

<<Տեղեկատվության ազատության մասին>> ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ յուրաքանչյուր անձ իրավունք ունի ծանոթանալու իր փնտրած տեղեկությանը և (կամ) դա ստանալու նպատակով օրենքով սահմանված կարգով հարցմամբ դիմելու տեղեկատվություն տնօրինողին և ստանալու այդ տեղեկությունը:

<<Տեղեկատվության ազատության մասին>> ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի 7-րդ և 10-րդ մասերի համաձայն՝ գրավոր հարցման պատասխանը տրվում է հետևյալ ժամկետներում.

1) եթե գրավոր հարցման մեջ նշված տեղեկությունը հրապարակված չէ, ապա դրա պատճենը դիմողին է տրվում հարցումն ստանալուց հետո՝ 5-օրյա ժամկետում.
2) եթե գրավոր հարցման մեջ նշված տեղեկությունը հրապարակված է, ապա տվյալ հրապարակման միջոցի, վայրի և ժամկետի մասին տեղեկությունը դիմողին է տրվում հարցումն ստանալուց հետո՝ 5-օրյա ժամկետում.
3) եթե գրավոր հարցման մեջ նշված տեղեկությունը տրամադրելու համար անհրաժեշտ է կատարել լրացուցիչ աշխատանք, ապա այդ տեղեկությունը դիմողին է տրվում դիմումն ստանալուց հետո՝ 30-օրյա ժամկետում, որի մասին հարցումն ստանալուց հետո՝ 5-օրյա ժամկետում, գրավոր տեղեկացվում է դիմողին՝ նշելով հետաձգման պատճառները և տեղեկությունը տրամադրելու վերջնական ժամկետը:

Եթե տեղեկատվություն տնօրինողը չունի փնտրվող տեղեկությունը, կամ դրա տրամադրումն իր լիազորությունների շրջանակից դուրս է, ապա նա տվյալ գրավոր հարցումն ստանալուց հետո՝ 5-օրյա ժամկետում, պարտավոր է այդ մասին գրավոր տեղեկացնել դիմողին, իսկ հնարավորության դեպքում նրան տրամադրել նաև այդ տեղեկատվությունը տնօրինողի (այդ թվում՝ արխիվի) գտնվելու վայրը, որն ունի փնտրվող տեղեկությունը:

<<Տեղեկատվության ազատության մասին>> ՀՀ օրենքի 11-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ գրավոր հարցմամբ պահանջվող տեղեկության տրամադրումը մերժելու դեպքում տեղեկատվություն տնօրինողն այդ մասին 5-օրյա ժամկետում գրավոր հայտնում է դիմողին՝ նշելով մերժման հիմքը (օրենքի համապատասխան նորմը), ինչպես նաև դրա բողոքարկման կարգը:

Վերոգրյալ իրավանորմերի համակարգային վերլուծությունից հետևում է, որ տեղեկություն փնտրելու և դա ստանալու նպատակով տեղեկատվություն տնօրինողին հասցեագրված դիմումը ստանալու պահից տեղեկություն տնօրինողի վրա օրենսդիրը դրել է որոշակի ակտիվ գործողությունների կատարման պարտականություն և այդ պարտականությունները կատարման համար սահմանել 5-օրյա ժամկետ, մասնավորապես՝ նշված ժամկետում տրամադրել չհրապարակված տեղեկությունը, հրապարակված տեղեկության պայմաններում տրամադրել հրապարակման միջոցի, վայրի և ժամկետի մասին տեղեկություն, տեղեկացնել տեղեկությունը տրամադրելու համար լրացուցիչ աշխատանք կատարելու անհրաժեշտության վերաբերյալ, հայտնել դիմողին փնտրվող տեղեկությունը չունենալու կամ դա տրամադրելու իրավասություն չունենալու մասին կամ օրենքով սահմանված հիմքերի առկայության դեպքում մերժել գրավոր հարցմամբ պահանջվող տեղեկության տրամադրումը: Ընդ որում, գրավոր հարցմամաբ փնտրվող տեղեկության տրամադրելը հետաձգելու դեպքում օրենսդիրը սահմանել է առավելագույն ժամկետ, այն է՝ դիմումը (գրավոր հարցումը) ստանալու պահից 30 օր:

Սույն գործի փաստերի համաձայն՝ Կազմակերպությունը 05.11.2014թ. թիվ 230-ի 3 գրությամբ Նոյեմբերյանի քաղաքապետարանից պահանջել է տրամադրել Նոյեմբերյան համայնքի ղեկավարի 2014թ. 1-ին կիսամյակի գործուղումների ցանկը և յուրաքանչյուր գործուղման համար համայնքային բյուջեից ծախսված գումարի չափը, 2014թ. 1-ին կիսամյակում Նոյեմբերյան քաղաքում ասֆալտապատման աշխանքների համար համայնքային բյուջեից ծախսված գումարի հաշվետվությունը, Նոյեմբերյան քաղաքում ասֆալտապատման աշխանքների իրականացման համար հայտարարված մրցույթի մասնակիցների տվյալներն ու մրցույթի քաղվածքը: Նշված հարցումը 10.11.2014թ. հանձնվել է Քաղաքապետարանին: Քաղաքապետարանն ընդունում է, որ Կազմակերպության թիվ 230-ի 3 հարցման հիման վրա իրենց կողմից ներկայացվել է տեղեկություն՝ հայցադիմումի մեկ օրինակը ստանալու հաջորդ օրը, իսկ հայցադիմումին կից ներկայացված փոստային առաքման անդորրագրերի համաձայն հայցադիմումը Քաղաքապետարանին ուղարկվել է 13.02.2015թ., որը ստացվել է 17.02.2015թ.:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 29-րդ հոդվածի 2-րդ մասի 4-րդ կետի <<գ>> ենթակետի համաձայն՝ ճանաչման հայցով ապացուցման բեռը կրում է՝ վարչական մարմինը՝ այլևս իրավաբանական ուժ չունեցող միջամտող վարչական ակտի, ինչպես նաև որևէ կատարված գործողության կամ թույլ տրված անգործության իրավաչափությունը հիմնավորող փաստերի մասով: Իսկ 30-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ ապացուցման կարիք չունեն այն փաստերը, որոնք հակառակ կողմը չի վիճարկում, բացառությամբ այն դեպքի, երբ դատարանը համարում է, որ դրանց ապացուցումն անհրաժեշտ է:

Տվյալ դեպքում Քաղաքապետարանը չի վիճարկում և ընդունում է այն փաստերը, որ <<Տեղեկատվության ազատության մասին>> ՀՀ օրենքով սահմանված ժամկետում չի պատասխանել Կազմակերպության 05.11.2014թ. թիվ 230-ի 3 հարցմանը և հաղիսացել է այդ հարցմամբ փնտրվող տեղեկությունը տնօրինող սուբյեկտը: Ավելին, կրելով ապացուցման բեռը Դատարանին չներկայացրեց սահմանված ժամկետում հարցմանը

չպատասխանելու օրինական հիմք լինելու վերաբերյալ որևէ վերաբերելի և թույլատրելի ապացույց:

Այսպիսով, Դատարանը գտնում է, որ Կազմակերպության 05.11.2014թ. թիվ 230-ի 3 հարցումը ստանալուց հետո Քաղաքապետարանը պարտավոր էր <<Տեղեկատվության ազատության մասին>> ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի 7-րդ և 10-րդ մասով և նույն օրենքի 11-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանված ժամկետներում կատարել նույն նորմերով սահմանված գործողությունները, որոնք չի կատարել: Քաղաքապետարանը հանդիսնալով տեղեկությունը տնօրինող սուբյեկտ ի պատասխան Կազմակերպության հարցմանը տրամադրել է տեղեկություններ, սակայն 10.11.2014թ. ստանալով հարցումը դրան պատասխանել է <<Տեղեկատվության ազատության մասին>> ՀՀ օրենքով սահմանված առավելագույն ժամկետների խախտմամբ, այսինքն՝ գրավոր հարցմանը սահմանված ժամկետում չպատասխանելով դրսևորել է անգործություն: Ընդ որում, Դատարանը հարկ է համարում արձանագրել, որ տվյալ դեպքում Քաղաքապետարանը չի ունեցել գործելու կամ չգործելու հայեցողություն, այլ կաշկանդված լինելով օրենքի պահանջով պարտավոր է եղել սահմանված ժամկետում տրամադրել փնտրվող տեղեկությունը:

Վերոգրյալ իրավանորմերի կարգավորման և սույն գործի փաստերի համադրման արդյունքում Դատարանը գտնում է, որ Քաղաքապետարանը ՀՀ Սահմանադրության, <<Տեղեկատվության ազատության մասին>> ՀՀ օրենքի վերոհիշյալ նորմերի պահանջների խախտմամբ դրսևորել է ոչ իրավաչափ անգործություն, որպիսի պայմաններում հայցը ենթակա է բավարարման:

Անդրադառնալով դատական ծախսերի բաշխման հարցին, հիմք ընդունելով ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 60-րդ հոդվածի պահանջը Դատարանը գտնում է, որ Քաղաքապետարանից հօգուտ ՀՀ պետական բյուջեի պետք է բռնագանձել 4.000 դրամ, որպես Դատարանի 23.03.2015թ. որոշմամբ վճարումը հետաձգված պետական տուրքի գումար:

Վերոգրյալի հիման վրա և ղեկավարվելով ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 60-րդ, 123-127-րդ հոդվածներով՝ Դատարանը

Վ Ճ Ռ Ե Ց

<<Ինֆորմացիայի ազատության կենտրոն>> հասարակական կազմակերպության հայցը բավարարել:

Նոյեմբերյանի քաղաքապետարանի այն անգործությունը, որով <<Տեղեկատվության ազատության մասին>> ՀՀ օրենքով սահմանված ժամկետում պատասխան չի տրվել <<Ինֆորմացիայի ազատության կենտրոն>> հասարակական կազմակերպության 05.11.2014թ. թիվ 230-ի 3 հարցմամբ փնտրվող տեղեկատվության վերաբերյալ ճանաչել ոչ իրավաչափ:

Նոյեմբերյանի քաղաքապետարանից հօգուտ ՀՀ պետական բյուջեի բռնագանձել 4.000 դրամ, որպես պետական տուրքի գումար:

Օրինական ուժի մեջ մտնելուց հետո վճիռը կամովին չկատարելու դեպքում այն կկատարվի հարկադիր կատարումն ապահովող ծառայության միջոցով՝ պարտապանի հաշվին:

Սույն վճիռն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից մեկ ամիս հետո և կարող է բողոքարկվել ՀՀ վարչական վերաքննիչ դատարան, մինչև դրա օրինական ուժի մեջ մտնելու համար սահմանված ժամկետը:

ԴԱՏԱՎՈՐ Ա. ՄԿՐՏՉՅԱՆ